

Առողջության քաղաքականություն

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը հոգ է տանում իր սպառողների առողջության մասին: Ընկերությունը առաջարկում է ըմպելիքների ավելի լայն տեսականի. ավանդական գազավորված ըմպելիքներից՝ այդ թվում նորմալ և ցածր կալորիականությամբ, մինչև հյութեր, ջրեր և այլ ոչ գազավորված ըմպելիքներ: Դրանք բոլորը կարելի է օգտագործել առողջ սննդակարգի շրջանակներում:

Ըմպելիքների մեր տեսականին հարմար է ըմպելու բազմազան առիթներով առավոտից մինչ գիշեր: Բացի այդ, ընկերությունը աջակցում է առողջ ապրելակերպին և ֆիզիկական ակտիվությանը նպաստող գործունեությանը:

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը հանձնառել է բավարարել սպառողների հետևյալ պահանջները.

1) Զովացուցիչ ըմպելիքների լայն ընտրություն

ա) Մենք կշարունակենք ընդլայնել մեր տեսականին՝ ներառելով ավանդական գազավորված ըմպելիքներ, հյութեր, ջրեր, թեյեր, սուրճ և ֆունկցիոնալ ըմպելիքներ, որոնք կատարելագործված ու հարստացված են առողջության համար առավել օգտակար լինելու նպատակով:

բ) Մենք կշարունակենք առաջ մղել ցածր կալորիականությամբ և կալորիականություն չունեցող ըմպելիքները: Ընկերության ըմպելիքների միջին կալորիականությունը 2001 թ. ի վեր նվազել է գրեթե 20% - ով:

գ) Մենք կտրամադրենք փաթեթավորման չափերի հարմար ընտրություն՝ օգնելու համար սպառողներին կարգավորել կալորիաների ընդհանուր քանակը:

2) Սպառողին տրամադրվող տեղեկատվության ընդլայնում

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը պարտավորվում է տրամադրել պատասխանատու տեղեկատվություն իր ապրանքների մասին՝ սննդանյութերի պարզ, դյուրընկալելի, տարայի առաջամասում առկա սննդայնության պիտակավորման, սննդայնության ծրագրերի և օժանդակ նյութերի միջոցով՝ օգնելու սպառողներին կատարել տեղեկացվածության վրա հիմնված ընտրություն:

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը օգտագործում է փաթեթի հետնամասի պիտակավորումը՝ տրամադրելու համար մանրամասն տեղեկություններ մեկ չափաբաժնում կալորիաների, շաքարի, ճարպի, հագեցած ճարպի և աղի պարունակության և առողջ սննդակարգում մասնաբաժնի մասին: Դա թույլ է տալիս սպառողներին տեղեկացված որոշումներ ընդունել քաշի վերահսկման առումով: Լրացուցիչ տեղեկություններ տրամադրվում են Ընկերության հրապարակումների, կայքէջի և սպառողներին արձագանքելու ծառայությունների միջոցով:

3) Պատասխանատու վաճառք և մարքեթինգ

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունն իր գովացուցիչ ըմպելիքները չի վաճառում տարրական դպրոցներում և ՋԼՄ - ներով տրվող գովազդը չի ուղղում մինչև 12 տարեկան երեխաներին ու խրախուսում է դիստրիբյուտոր ընկերություններին հավատարիմ մնալ նույն պարտավորություններին:

Դպրոցներում, որտեղ երեխաները 12 տարեկանից բարձր են, ընկերությունն ուսուցիչների, ծնողների և այլ շահագրգիռ կողմերի հետ քննարկում է, թե որ ըմպելիքներն են առավել հարմար:

4) Համակողմանի ապրելակերպի ծրագրեր

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը, հանդիսանալով Ձովագուցիչ ըմպելիքների եվրոպական ասոցիացիաների միության (UNESDA) հիմնադիր անդամ, ստորագրել է միության Հանձնառությունները՝ մասնավոր հատվածի պարտավորությունների մի շարք, որ վերաբերում է Եվրամիությունում սպառողի տեղեկացմանն և կրթությանը, առողջ ապրելակերպին և ֆիզիկական ակտիվությանը, գովազդին, ըմպելիքների ընտրությանը և հետազոտություններին: Հանձնառությունները օժանդակում են Եվրոպական Միության (ԵՄ)՝ Սննդակարգին, Ֆիզիկական ակտիվությանը և առողջությանը վերաբերող գործողությունների պլասֆորմին, որն իրենից ներկայացնում է գիրության դեմ պայքարում կարևոր, բազմաթիվ շահագրգիռ կողմեր ունեցող համագործակցություն, և վերաբերում են ԵՄ-ի սահմաններում Ընկերության ողջ գործունեությանը:

5) Սպորտի և ֆիզիկական ակտիվության խթանում

Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերությունը ակտիվորեն զարգացնում, մասնակցություն է ունենում և ֆինանսապես աջակցում է բազմազան մարզական միջոցառումների և այլ տեսակի ֆիզիկական ակտիվության՝ որպես միջոց խթանելու ընդհանուր ֆիզիկական առողջությունը և, մասնավորապես, խրախուսելու մարդկանց կարգավորել մարմնի քաշը և կանխել գիրությունը: Ընկերությունն աշխատում է պետական գործակալությունների, սպորտային և սննդի փորձագետների և արդյունաբերական ոլորտի անդամների հետ՝ ֆիզիկական ակտիվության նախաձեռնությունների և սննդային կրթական ծրագրերի համատեղ համակարգման նպատակով:

Մենք խրախուսում ենք մեր աշխատակիցներին լինել առողջ և լավ մարզավիճակում՝ նրանց տրամադրելով խորհուրդներ և տեղեկատվություն

սննդի, առողջության և առողջ ապրելակերպի մասին, ինչպես նաև մարմնամարզության դահլիճներ մի շարք վայրերում:

Որպես գլխավոր գործադիր տնօրեն ես պարտավորվում եմ հավատարիմ մնալ Առողջության և առողջ լինելու սույն քաղաքականությանը, որը ճանաչվել և հաստատվել է Տնօրենների խորհրդի Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության կոմիտեի կողմից: Կոկա-Կոլա Հելլենիկ ընկերության յուրաքանչյուր աշխատակից պատասխանատվություն է կրում այս ծրագրի արդյունավետ իրականացման համար:

Դիմիտրիս Լոյիս

Գլխավոր գործադիր տնօրեն